

Կ Ն Ի Ք

1885

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ եւ անհասանելի կամօքն Աստուծոյ . Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց :

Գերապատիւ Մեսրոպ Արքեպիսկոպոսի սիրելոյ մերում ողջոյն հայրական սիրոյ :

Յայտարարութիւն ձեր արձակեալ առ մեզ յ30 մայիսի անցելոյ ընդ համար 150 յիրաւի ուրախացոյց զմեզ ընդ գործս ժրաջան աշխատութեանց Ստեփաննոս վանահայր քահանային եւ ընդ ջանս վաստակոց ձերոց ի պայծառութիւն վանից սրբոյն Ստեփաննոսի որ ի Սաղիան . ուստի հրաւիրեմք զսրբազնութիւն ձեր կոչել զՍտեփաննոս քահանայն ի պատիւ կուսակրօն արեղայութեան , տալով նմա զհովուական գլխարկ գանուանեալն առ մեզ վեղար ի տրիտուր աշխատութեանց նուէին . եւ կամիմք . զի յայսմ հետէ առաջարկեսցիք մեզ մաքուր դիտատրութեամբ ի վարձատրութիւն զժրաջան մշակս եկեղեցոյ մերոյ սրբոյ ըստ իւրաքանչիւրոց արժանեացն .

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Համար 268

ի 26 յունիսի 1888 ամի Փրկչական .

եւ ի թուականութեան մերում ՌՅԼԸ

ի Ս . Էջմիածին

Նոյն թուով հմ. 151 , յայտնեցի Սինոդին տեղեկութեան համար . եւ համար 152 յայտնեցի նաեւ Համախոյ վիճակային առեւնին տեղեկութիւն եւ հաշուետեսութեան համար :

Այսպէս վերջացաւ Սաղիանի վանքի շինութիւնն 1889 թուին , մնալով միայն զմբէթն տանեաց (Կաթողիկէն) որ Համախի քաղաքի մեր եկեղեցոյ զմբէթի նման վայտեայ եւ թիթեղապատ շինելով կ'կարօտի ծախուց ց500 ռուբլի , եւ շատ